ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Գեղարքունիքի մարզում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների նվազում:



Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշները Գեղարքունիքի մարզում, %

Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Գեղարքունիքի մարզում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը աճել է 0,7%-ով և կազմել է 88,9%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 0,8%-ով ՝ կազմելով 90,1%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,3%-ով՝ կազմելով 95,2%: 2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Արծվանիստի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ում (74,4%), «Վարդենիսի պոլիկլինիկա»

ՊՓԲԸ-ում (75%), «Սևանի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում (76,4%) «Ակունքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ում (78,3%) և «Նորատուսի ԲԱ» ՊՈԱԿ-ում (81%),(Աղյուսակ 2):

2019 թվականին 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Սևանի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում (69,6%) և «Վարդենիսի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում (72,3%)(Աղյուսակ 2):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո մարզում 2019թ. դեկտեմբերին դիտվել է ցուցանիշների որոշակի բարելավում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 1,1%-ով և կազմել 88,9%, 2 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 1,5%-ով և կազմել 90,1%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ Գեղարքունիքի մարզում՝ 52,6%:

Ստորև ներկայացվում է պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի:



Գծապատկեր 2՝ 2019թ. Գեղարքունիքի մարզում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի